Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
հուլիսի 30-ի թիվ 122-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. մայիսի 26-ի թիվ 91-Ա որոշում
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
Հաշվեքննության առարկան	Արտակարգ իրավիճակների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. մարտի 31-ը
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020թ. հունիսի 8-ից մինչև 2020թ. հուլիսի 31-ը
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը

I. Ընդհանուր մաս

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև բնածին և մարդածին աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցման և վերացման, իրականացման համակարգման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների համակարգման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանման գործընթացների պետական կարգավորման ու դրա իրականացման աշխատանքների համակարգման, նշված ոլորտների խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության սպացման, ամփոփման, նշված ոլորտներում կառավարման իրականացման և համակարգման, հումանիտար արձագանքման գործողությունների իրականացման համակարգման, պետական պահուստի պաշարների պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովման, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների համակարգման, պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզիաների տրամադրման, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման, տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման, հաշվառման, ինչպես նաև լիցենզավորման ծառայությունների մատուցման ապահովման, արտակարգ իրավիճակների, աղետների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բուժօգնության ցուցաբերման և բուժտարահանման միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպչական և ռազմավարական հիմունքների մշակման, ՀՀ պաշտպանության կազմակերպման մասնակցության (խաղաղ ժամանակ ՀՀ պաշտպանության ապահովման ուղղությամբ քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, դրանց ծավալման և կիրառման պլանավորումը և ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում այդ ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի) ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

II. Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի վերաբերյալ

2020թ. «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը սահմանված խնդիրների իրականացման համար ընդհանուր թվով բյուջետային 10 ծրագրերի իրականացման համար Նախարարությանը նախատեսվել է հատկացնել 15,308,673.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.122019թ. թիվ 1919-Ն որոշման համաձայն նախատեսվել է Նախարարության տարեկան ծախսերը ավելացնել 269,424.0 հազ. դրամով, ինչի արդյունքում 2020թ. տարեկան ճշգրտված պլանը կազմել է 15,578,097.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշմամբ 2020թ. առաջին եռամսյակի համամասնությունը սահմանվել է շուրջ 22%, կամ առաջին եռամսյակի ճշգրտված պլանը կազմել է 3,419,907.1 հազ. դրամ:

Ըստ ծրագրերի Նախարարության առաջին եռամսյակի ծախսային ցուցանիշները և ծրագրերի փաստացի կատարողականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

հազ. դրամ

Հ/Հ	Ծրագիր	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակա-հատվածի ճշտված պլան	Դրամարկղա-յին ծախս	Փաստացի ծախս	%
1	Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,110,092.50	214,012.90	189,526.76	259,021.44	**88.6**
2	Փրկարարական ծառայություններ	11,370,557.00	2,603,299.10	1,857,550.60	2,545,222.21	**71.4**
3	Հիդրոօդերևութաբանական ծառայություններ	1,313,140.50	223,233.90	223,233.90	223,233.90	**100**
4	Տեխնիկական անվտանգության կանոնակարգում	100,297.20	61,870.50	61,870.50	61,870.50	**100**
5	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	34,531.00	7,045.90	7,045.90	6,756.10	**100**
6	Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում	126,283.60	25,256.70	25,256.70	25,256.70	**100**
7	Սեյսմիկ պաշտպանություն	834,561.10	151,055.40	151,055.40	150,600.30	**100**
8	Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում	374,301.10	83,093.80	75,375.80	75,375.80	**90.7**
9	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	44,909.00	7,454.90	7,454.90	7,454.90	**100**
10	Սոցիալական փաթեթների ապահովում	269,424.00	43,584.00	-	63,948.00	**-**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**15,578,097.00**	**3,419,907.10**	**2,598,370.46**	**3,418,739.85**	**75.9**

III. Հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ

Հաշվեքննության շրջանակներում Նախարարության կողմից հաշվեքննությունն իրականացնող ստորաբաժանմանը չեն տրամադրվել ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով սահմանված առաջին եռամսյակի համար կազմված «ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ» (Ձև Հ-2), «ՀԻՄՆԱՐԿԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ, ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ» (Ձև Հ-4) և «ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» (Ձև Հ-8) թղթային հաշվետվությունները և դրանց համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, ինչի հետևանքով հաշվեքննությունն իրականացնող ստորաբաժանումը հնարավորություն չի ունեցել գնահատել վերոնշյալ հաշվետվությունների արժանահավատությունը:

<u>Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին:</u> Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, 2020թ. առաջին եռամսյակում Նախարարության փաստացի ծախսը կազմել է 3,418,739.85 հազ. դրամ, իսկ դրամակղային ծախսը՝ 2,598,370.46 հազ. դրամ, ինչի արդյունքում 2020թ. առաջին եռամսյակի ծախսերի փաստացի կատարողականը կազմել է 75.9%: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2020թ. առաջին եռամսյակի Պետական բյուջեի կատարման վերլուծության, ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է եղել հիմնականում «Փրկարարական ծառայություններ» ծրագրի ծախսերի ցածր կատարողականով, որոնք կատարվել են 71.3%-ով և կազմել շուրջ 1.9 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ ընթացիկ տարվա մարտ ամսվա աշխատավարձի ծախսերը նախատեսվել են առաջին եռամսյակի ծախսերում, սակայն վճարվել են ապրիլ ամսին[1]:

Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 388,353.0 հազ. դրամ, ընդ որում՝ 200,603.63 հազ. դրամը նախորդ տարվա բյուջեից: Առաջին եռամսյակի ավարտին Նախարարության ընդհանուր դեբիտորական պարտքը կազմել է 324,504.29 հազ. դրամ, որից 256,385.43 հազ. դրամը նախորդ տարվա բյուջեից:

Դեբիտորական պարտքերը հիմնականում ձևավորվել են Փրկարար ծառայության պահուստավորված միջոցների հաշվին, մասնավորապես՝ 2020թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ դեբիտորական պարտք պարունակել են՝ «Պահեստավորված գրասենյակային նյութեր և հագուստ (44,155.62 հազ. դրամ)», «Պահեստավորված

[1] http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2020_t_arajin_eramsyak

տրանսպորտային նյութեր (85,357.49 հազ. դրամ)» և «Պահեստավորված հատուկ նպատակային այլ նյութեր (52,472.72 հազ. դրամ)» հոդվածները:

Կրեդիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 56,037.72 հազ. դրամ, և ամբողջապես ձևավորվել է նախորդ տարվա բյուջեից, որը եռամսյակի արդյունքներով աճել է՝ կազմելով 932,188.91 հազ. դրամ:

2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով կրեդիտորական պարտքեր ձևավորվել են հիմնականում աշխատողների վարձատրության հոդվածով՝ 748,186.63 հազ. դրամ, որը, ինչպես վերը նշվեց, պայմանավորված է եղել նրանով, որ մարտ ամսվա աշխատավարձերը վճարվել են ապրիլ ամսին:

Ծրագրերի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ: Նախարարության կողմից իրականացվող բյուջետային 10 ծրագրերի համար սահմանվել են ընդհանուր թվով 165 արդյունքային ցուցանիշներ, ընդ որում՝ «Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» և «Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրերի գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներ չեն սահմանվել:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2020 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվության[2], ընդհանուր թվով 146 արդյունքային (կատարողական) ցուցանիշների մասով Նախարարության կողմից ապահովվել է 100% կատարողական, թվով 17 արդյունքային ցուցանիշներ թերակատարվել են, իսկ 2 ցուցանիշ՝ գերակատարվել:

➢ Աշխատանքի վարձատրություն

(411100-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, 411200-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, 411300-Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում)

Նախարարության աշխատակազմին (ներառյալ փրկարար ծառայության աշխատակիցներ) ՀՀ պետական բյուջեից աշխատանքի վարձատրության ծախսերի համար 2020թ. առաջին եռամսյակի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,625,692.90 հազ. դրամ:

Նախարարության աշխատակազմի համար եռամսյակային ճշգրտված պլանը կազմել է 187,206.7 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը 31.03.2020թ. դրությամբ կազմել է 226,417.18 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում դրամարկղային ծախսը կազմել է 174,094.71 հազ. դրամ, կամ փաստացի կատարողականը՝ 92.9%:

Փրկարար ծառայության աշխատակիցներին աշխատանքի վարձատրության ծախսերի համար 2020թ. առաջին եռամսյակի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,438,486.20 հազ. դրամ: 31.03.2020թ. դրությամբ փաստացի ծախսը կազմել

[2] Նույն տեղում

է 2,425,177.52 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 1,741,515.62 հազ. դրամ, կամ փաստացի կատարողականը՝ 71.5%: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է եղել նրանով, որ մարտ ամսվա աշխատավարձի ծախսերը նախատեսվել են առաջին եռամսյակի ծախսերում, սակայն վճարվել են ապրիլ ամսին:

Աղյուսակ 2

հազ. դրամ

Ծրագիր	Հոդված	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանա-կահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս	%
Փրկարարական ծառայություններ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	8,596,060.20	1,977,093.80	1,394,769.57	2,075,906.99	70.5
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1,967,555.20	452,537.70	337,891.35	340,415.83	74.7
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	17,709.30	8,854.70	8,854.70	8,854.70	100.0
Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	775,065.90	129,177.70	128,915.11	181,237.58	99.8
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	158,084.00	26,347.30	13,497.90	13,497.90	51.2
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	63,363.40	31,681.70	31,681.70	31,681.70	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ		11,577,838.00	2,625,692.90	1,915,610.33	2,651,594.70	73.0

Հաշվեքննության առաջադրանքի ծրագրով նախատեսվել է ձեռք բերել ապացույցներ ծախսերի արժանահավատության և հիմնավորվածության կամ խեղաթյուրումների և անհամապատասխանությունների առկայության վերաբերյալ: Սակայն, հաշվեքննությունն իրականացնող ստորաբաժանման կողմից նշված խնդիրների պատասխանները և հիմնավորումները հնարավոր չի եղել ստանալ, քանի որ Նախարարության կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին առ 09.06.2020թ. ներկայացված թիվ 01/03.2/3474-20 գրությամբ տեղեկացվում է, որ հաշվեքննության իրականացման ժամանակահատվածում ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունը նույնպես ստուգում է իրականացնում Նախարարությունում, և վերջինս հրաժարվել է տրամադրել ծախսերի համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և տվյալները (Հավելված 1):

➢ Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին (463700)

Նախարարությանը ՀՀ պետական բյուջեից «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2020թ. նախատեսվել է հատկացնել 2,728,432.1 հազ. դրամ, որից առաջին եռամսյակում՝ 541,686.8 հազ. դրամ: 2020թ. առաջին եռամսյակում փաստացի և դրամարկղային ծախսը կազմել է 541,686.8 հազ. դրամ:

Հոդվածի շրջանակներում Նախարարության և վերջինիս ենթակայության տակ գործող ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքվել է դրամաշնորհային 10 պայմանագրեր:

Աղյուսակ 3

հազ. դրամ

	Ստացողի անվանումը	Պայմանագրի գումար	1-ին եռամսյակում վճարված գումար	Մնացորդ	Նպատակ
1	Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայութուն ՊՈԱԿ	97,741,800	16,616,100	81,125,700	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
2	Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն ՊՈԱԿ	736,819,300	134,439,300	602,380,000	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
3	Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն ՊՈԱԿ	1,313,140,500	223,233,900	1,089,906,600	Հիդրոօդերևութաբանական ծառայություններ
4	Պահուստ ՊՈԱԿ	189,910,700	42,051,780	147,858,920	Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում
5	Լազուր ՊՈԱԿ	137,810,100	33,324,020	104,486,080	Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում
6	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	46,297,200	7,870,500	38,426,700	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
7	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	54,000,000	54,000,000	-	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
8	Աղետների բժշկության կենտրոն ՊՈԱԿ	18,707,700	3,118,600	15,589,100	Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ
9	Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա ՊՈԱԿ	126,283,600	25,256,700	101,026,900	Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ
10	Ռուս- հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն ՄՈԱԿ	7,721,200	1,775,900	5,945,300	Պետական աջակցություն ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնին
	Ընդամենը	**2,728,432,100**	**541,686,800**	**2,186,745,300**	

Հաշվի առնելով այն, որ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով ծախսը կատարվել է Նախարարության ենթակայության տակ գործող կազմակերպությունների կողմից, սույն հոդվածի մասով ծախսերի արժանահավատության գնահատում առաջին եռամսյակում չի իրականացվել: Այն կներառվի 2020թ. առաջին կիսամյակի հաշվեքննության պլանում, իսկ ծախսերի արժանահավատության ուսումնասիրությունը կկատարվի հաջորդ եռամսյակում:

- **Էներգետիկ ծառայություններ (421200)**

Նախարարությանը ՀՀ պետական բյուջեից «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով 2020թ. նախատեսվել է հատկացնել 140,771.80 հազ. դրամ, որից առաջին եռամսյակում՝ 64,171.7 հազ. դրամ: 2020թ. առաջին եռամսյակում փաստացի ծախսը կազմել է 57,289.15 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 60,391.64 հազ. դրամ: Ծախսերի նման անհավասարությունը պայմանավորված է նրանով, որ տարեսկզբին Նախարարությունն այս հոդվածով ունեցել է 22,649.35 կրեդիտորական պարտք, որը իրենից ներկայացնում է նախորդ տարվա դեկտեմբեր ամսին օգտագործված բնական գազի և էլեկտրաէներգիայի գծով ծախսերը, որի դիմաց վճարումները կատարվել են 2020թ. հունվարի 31-ին, և ներառվել առաջին եռամսյակի դրամարկղային ծախսերի մեջ, իսկ ընթացիկ տարվա մարտ ամսվա ընթացքում օգտագործված 19,310.86 հազ. դրամ ընդհանուր արժեքով ծառայությունները ներառվել են փաստացի ծախսերի կազմում, սակայն դրանց համար առաջին եռամսյակի ընթացքում վճարումներ չեն կատարվել: Միաժամանակ, Նախարարությունն ունեցել է 236.0 հազ. դրամի էներգետիկ ծառայություններին ուղղված պահեստավորված միջոցներ:

- **Տրանսպորտային նյութեր (426400)**

Նախարարությանը ՀՀ պետական բյուջեից «Տրանսպորտային նյութեր» հոդվածով 2020թ. նախատեսվել է հատկացնել 238,736.0 հազ. դրամ, որից առաջին եռամսյակում՝ 41,422.8 հազ. դրամ: 2020թ. առաջին եռամսյակում փաստացի ծախսը կազմել է 36,760.28 հազ. դրամ, իսկ դրամարկղայինը՝ 37,890.0 հազ. դրամ: Վերոնշյալ հոդվածի գծով կատարված ծախսերի հիմնավորվածության և արժանահավատության վերաբերյալ գնահատական չի տվել (Հավելված 1):

- **Ներքին գործուղումներ (422100)**

Նախարարությանը ՀՀ պետական բյուջեից ներքին գործուղումների համար 2020թ. առաջին եռամսյակում նախատեսվել է հատկացնել 578.5 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 110.5 հազ. դրամ:

«Փրկարար ծառայության» ծրագրով ներքին գործուղումների համար 2020թ. առաջին եռամսյակում նախատեսվել է հատկացնել 5,484.4 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 4,064.0 հազ. դրամ: Ներքին գործուղումներ հոդվածի գծով կատարված ծախսերի հիմնավորվածության և արժանահավատության վերաբերյալ գնահատական չի տվել (Հավելված 1):

➢ Նախարարության կարիքների համար իրականացված գնումների գործընթացի վերաբերյալ

Նախարարության կարիքների համար 2020թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմակերպվել է գնման 53 մրցութային ընթացակարգ, որի արդյունքներով հաշվետու տարվա առաջին եռամսյակում կնքվել է 81 պայմանագիր՝ 407,025.78 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. առաջին եռամսյակում բոլոր պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացը չի կազմակերպվել էլեկտրոնային համակարգի միջոցով, և էլեկտրոնային գնումների համակարգում բացակայել են պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված եզրակացությունները և հանձնման-ընդունման արձանագրությունները, իսկ Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 110-րդ կետի պահանջները՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

<u>ԱԻՆ դիրքորոշում</u> *Ձեր կողմից արված այն արձանագրմանը, որ բոլոր պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացը չի կազմակերպվել էլեկտրոնային համակարգի միջոցով, հարկ եմ համարում նշել, որ 2019թ. ԱԻՆ ՓԾ շինարարական աշխատանքների հանձնման-ընդունման գործընթացները ամբողջովին կազմակերպվել են էլեկտրոնային եղանակով: 2020թ. 3-րդ, 4-րդ եռամսյակներին կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ պատասխանատու ստորաբաժանումների կողմից հանձնման-ընդունման գործընթացը ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացը կազմակերպելու» կարգի 110 կետի համաձայն էլեկտրոնային եղանակով կազմակերպելու նպատակով:*

<u>Հաշվեքննողի արձագանք</u> *Չի ընդունվել, քանի որ հաշվեքննությունը վերաբերվում է 2020թ. առաջին եռամսյակին, իսկ ԱԻՆ-ի դիրքորոշման մեջ մատնանշվել են նախորդ ժամանակահատվածի պայմանագրերի մի մասը, և հաջորդող ժամանակահատվածները, որին դեռևս Հաշվեքննիչ պալատը կանդրադառնա:*

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն: